հիշնախնդիր

ԱԼԲԵՐՏ ԲԱԶԵՅԱՆ. «Ո՛Չ ՄԻ ՉԻՋՈՒՄ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ»

ՕՖԵԼՅԱ ՔՈՉԱՐՅԱՆ

«Ղարաբաղի խնդրի կարգավորման շուրջ ընթացող զարգացումները բոլորիս ցանկությունն է, որ լինեն դրական, քանի որ Ղարաբաղի հարցի հայանպաստ լուծումը համազգային խնդիր է, ինչը հետապնդում ենք ավելի քան 13 տարի»,- ՄԱԱ-ում լրագրողների հետ կայացած հանդիպման ժամանակ հայտարարեց «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ, «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչ Ալբերտ Բազեյանը:

Նա նշեց, որ «չնայած կան անհանգստացնող երեւույթներ ու գնահատականներ», այդուհանդերձ չի ցանկանա «զուտ կանխատեսումների հիման վրա որոշակի եզրահանգումներ անել»: Այդ դեպքում ինչպիսի՞ն է կուսակցության կամ դաշինքի դիրքորոշումը, ո՞րն է փոխզիջումների սահմանը, որից այն կողմ պաշտոնական Երեւանը չպետք է անցնի: «ԱՄԲԻՈՆ»-ի հարցին ի պատասխան Բազեյանը նկատեց. «Զուտ ազգային, պետական շահերից ելնելով ոչ մի զիջում էլ այս փուլում եւ, ընդհանրապես, այս հարցում պետք չէ»: Միաժամանակ, ըստ Բազեյանի, հակամարտությունը իր լիարժեք լուծումը չի ստացել եւ խաղաղության պայմանագիր չի կնքվել, այլ ուղղակի հրադադարի 10-րդ տարին է, իսկ պատերազմից հետո առաջացած փաստացի իրողությունները միջազգային հանրությունը չի ճանաչում: «Հանրապետություն» կուսակցությունը գտնում է, որ «այնուամենայնիվ, հարցը բարձրացվել է Ղարաբաղի ժողովրդի կողմից եւ նրանք միջազգային բոլոր նորմերին համապատասխան հանրաքվեով հռչակել են իրենց անկախությունը, Հայաստանի օժանդակությամբ պաշտպանել են այդ անկախությունը ստեղծելով պետականություն, ուր կայանում են պետականության ինստիտուտները»: Ըստ այդմ Բազեյանը բացառեց Ղարաբաղի ենթարկումը Ադրբեջանի իշխանություններին եւ անկախությունից զատ այլ կարգավիճակ Ղարաբաղի համար գոյություն ունենալ չի կարող: Ինչ վերաբերում է տարածքային խնդիրների լուծմանը, ապա ՄԱԱ-ի հյուրի մեկնաբանմամբ «սխալ է

այն ձեւակերպումը, թե կարելի է հարցը խաղաղ կարգավորել տարածքների փոխանակման միջոցով, մասնավորապես շեշտվում է Մեղրին, որն անթույլատրելի է Հայաստանի տարածքային ամբողջականության անձեռնմխելիության տեսանկյունից»: «Այլ խնդիր է, որ հարցի լուծման համատեքստում կարող են քննարկվել թե տնտեսական կապերի, թե հաղորդակցման ուղիների հետ կապված խնդիրներ»,-նշեց Բազեյանը: Միաժամանակ Բազեյանը նշեց, թե «Ադրբեջանն ի՞նչ է զիջում հաշվի առնելով, որ մեր ցանկությունները բացարձակապես հակադիր են Ադրբեջանի ցանկություններին ու նկրտումներին»: Իսկ ոչ լեգիտիմ իշխանության գոյությունը, Բազեյանի խոսքերով, «բացասաբար կանդրադառնա եւ Ղարաբաղի հարցի լուծման, եւ տարածաշրջանում մեր արտաքին քաղաքականության վրա, քանի որ միշտ հեշտ է եղել ճնշումներ գործադրել այն իշխանության վրա, որոնք խոցելի են, չեն վայելում ժողովրդի վստահությունը, որոնք արտաքին ճնշումների տակ կարող են շատ արագ զրկվել իշխանությունից»: «Այդ իշխանությունները երկարածգելու համար իրենց իշխանությունը ստիպված են լինում դառնալ արտաքին տարբեր ուժերի խամաճիկը»,- ընդգծեց Մամուլի ազգային ակումբի հյուրը: